

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Վարդիկավագում վախճանվեց

ՆԻՆԱ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԱՆՍՆԵԱՆՑ

Հանդուցեալի եղբայրները՝ Գրիգոր քահանայ Երմազանեանց եւ Ստեփաննոս Երմազանեանց ամուսիններով հանդերձ ցաւօք սրտի յայտնելով իրանց ազգականներին եւ ծանօթներին խնդրում են չնորձ բերել հոգեհանգստին, որը լինելու է ս. Նշան եկեղեցում, փետրվարի 18-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, պատարագից յետոյ: 1—1

Նատալիա Եվդոկիմովա եւ Միքայէլ Պապաշանեան խորին վշտով յայտնում են ազգականներին եւ ծանօթներին իրանց մօր

ԵՂԻՍԱԲԵԹ ՊԵՊԵՋԱՆԵԱՆԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ յանկարծակի, փետրվարի 18-ին, առաւօտեան: Ամբողջ կը կատարվի ուրբաթ, փետրվարի 16-ին, երեկոյեան ժամի 7-ին: Յուզարկաւորութիւնը չաբաթ, փետրվարի 17-ին, առաւօտեան, ժամի 10-ին, Ն. Եվդոկիմովայի բնակարանից (Բակինսկայա, 14) Թանգոյան եկեղեցին: Թաղումը Խօփմանի գերեզմանատանը: (ս. շ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Դեռ չը մշակված մի հարց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. «Զանազաններ». Նամակ Բագուրի. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Շոգեհաւ Վանի ծովի վրա. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հարիւր տարի:

ԴԵՌ ԶԸ ՄՇԱԿԱՎԱՐ ՄԻ ՀԱՐՑ

Խօսելով այն թույլ, ցաւազար եւ դժբաղդ ժառանգների մասին, որոնք ծնվում են տկար եւ անտաւար ծնողներից, մայրաքաղաքի յայտնի պրօֆեսորներից մէկը ասում է, որ բժիշկներին պէտք է իրաւունք տրվի իրական բժշկական գաղտնիքը եւ յայտնել ամուսնացողների հիւանդութիւնները մասին իրանց յայտնի տեղեկութիւնները: Թէեւ բժշկական գաղտնիքը, իբրեւ պաշտօնավարական գաղտնիք, չը պէտք է բացվէր ուրիշների առաջ, բայց ապագայ սերունդի առողջութեան հարցը այնքան կարեւոր է հասարակական տեսակէտից, որ նրա համար, պրօֆեսորի կարծիքով, Թոյլատրելի պէտք է նկատվի բժշկական գաղտնիքի խախտումը: Բայց, եթէ մի անգամ ամուսնութիւնը տեղի է

ունեցել, այն ժամանակ պէտք է նա համարվի անխելի եւ անլուծելի, եթէկուց ամուսնացողները զգան, որ նրանք սխալ են գործել ընտանիք կազմելով:

Անկասկած, հիմնական տեսակէտը շատ արդարացի է ու խելացի եւ բղիւժ է ամենալաւ ցանկութիւններից, սակայն առաջարկը իր գործարարութեան ներկայեւ զանախով անիրագործելի է անյարմար մի բան է: Արդարեւ, միթէ զբաղւելով ապահովում ենք մենք մեր նպատակի իրագործումը: Միթէ չարագործութիւնների եւ զեղծումների համար չէ բացվում մի ընդարձակ դուռ: Միթէ ամեն բժիշկ կը համաձայնվի ճիշդ տեղեկութիւններ տալ իր հիւանդներին մասին: Միթէ հիւանդները կը համաձայնվեն գնալ բժշկվելու այնպիսի բժշկի մօտ, որ նրանց հիւանդութեան գաղտնիքները բացում է ուրիշներին: Եւ միթէ կասկած կարող է լինել, որ գաղտնիք խոստացող բժիշկները կը մնան վերջ ի վերջոյ առանց հիւանդների:

Մենք լաւ գիտենք, որ ամուսնութիւնը, երբ մի անգամ նա կայացած է, պահանջում է իր լուծման համար լուրջ շարժառիթներ: Բայց քանի որ ամուսնացողների համար անկարելի է ամուսնութիւնից առաջ ճիշդ տեղեկութիւններ ունենալ մի-

մեանց մասին, պէտք էր դիւրութիւններ տալ լուծելու այն շղթան, որը կապվել է անգիտութեամբ: Երբ որ ամուսնացողները աչքի առաջ կունենան, որ ապագայում նրանց ցաւազարութիւնը կարող կը լինի առիթ ձանաչել ամուսնութիւն լուծելու համար, այն ժամանակ ամուսնութիւնները կը կատարվեն աւելի զգոյշ կերպով, քան այդ տեղի ունի այժմ, երբ կամաւ թագնվում են ամուսնացողները լուրջ տկարութիւնները:

Անկասկած է, սակայն, որ հարցը վերաբերում է լուրջ հիւանդութիւններին, որոնց գոյութիւնը իսկապէս պէտք է ընդունվի իրեն արգելք ընտանիք կազմելու համար: Այդ ինքիքը զեռ լաւ մշակված է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԱՆՔՆԵՐ
XXXVII

Լրագիրներում միշտ պատահում են յօդուածներ թատրոնական ներկայացումների մասին, բայց կենսաբան կատարվում են յաճախ կատակերգութիւններ, որոնց քննադատութիւնը այդ բաժնի մէջ չէ մտնում: Եւ կուզէի այսօր խօսել այդ կատակերգութիւններից մէկի մասին, որ կատարվում է Թիֆլիսի դրամայում:

Ինչպէս յայտնի է, վերջերս դրաման վճռել էր երկու դարոցական բժիշկներ նշանակել քաղաքային ուսումնարանների համար: Յայտնի է նոյնպէս, որ այդ հարցը վճռուել է դրամայի ուսումնարանական յանձնաժողովը: Այդ պայտօնների թեկնածու բժիշկները պէտք է լընդհեր ներկայացնեն այդ յանձնաժողովին, որ եւ պէտք է ինքիքը տուղների միջից ընտրէ ամենից արժանաւորներին եւ ներկայացնէ քաղաքապետին ի հաստատութիւն:

Այդպէս պէտք է լինի, որովհետեւ այդպէս է պահանջում առողջ դատողութիւնը, արդարութիւնը եւ օրէնքը: Բայց տեսէք, թէ ինչ է կատարվում Թիֆլիսի դրամայում:

Դեռ ընտրութիւն չեղած, դեռ ինքիքներ չը ստացված, բոլոր հետաքրքրվողների համար պարզ էր, թէ ովքեր են լինելու դարձական բժիշկները: Ինչպէս Որովհետեւ, ինչպէս ասում էին ուսումնարանական յանձնաժողովի անդամները, պ. քաղաքապետը արդէն խօսք է տուել երկու բժիշկների:

Դա կատակերգութիւնն չէ, հապա ինչ է: Հասակաւոր, միութեամբ, սպիտակ մազերով կամ բոլորովին անմազ լուրջ մարդիկ, որոնք ձայնաւոր անուն են կրում եւ քաղաքի հայ-

ներ, որոնք ճիւղված էին, արնաքամ էին դարձել մահաւորական անխելած լուծի տակ, յանկարծ դուրս են գալիս լայն աշխարհ, ստանում են մարդկային իրաւունքներ: Փոխվում է կեանքի նպատակն անգամ: Գերութեան երկաթի դարերում քրիստոնեայ ժողովուրդների համար գրեթէ միակ իմաստութիւնն էր դուրս ապրելները, մի կերպ կենալ պահպանել, յարմարվելով չորագաւառող արքայազնի պայմաններին: Անցնում են այդ ժամանակները: Գալիս է հաստատ օրէնքի թագաւորութիւնը, որ ապահովում է մարդու կեանքը, դոյքը, պատիւը, սեփականութիւնը: Այժմ նրա առջեւ այլ եւս կենդանական ծանր, սոսկալի հարցը չէ—ինչպէս անել կենալը պահպանելու համար: Այժմ հանգստութիւն վայելող մարդու առջեւ դրված է ուրիշ պահանջ.—առաջ գնալ, զարգացնել իր հոգեկան կարողութիւնները, քաղաքակրթվել, զարաւիր իր հոգի պատրաստված, արդիւնաւոր մշակ, բարեկեցութիւն ստեղծել լուսաւորված մարդկութեան գաղափարներին վրա:

Մի ամբողջ դար է, ինչ մեր երկիրը դրված է այդ ձանապարհի վրա: Եւ համեմատեցէք: Հարաւային մեր սահմանը Արաքսն է. այդ գետի միւս կողմում գեր տիրում է Դարեհների, —Կիրճանների դարը: Իսկ եթէ անցնենք Սօփիական լեռներից դեպի արեւմուտք, այնտեղ էլ կը տեսնենք կարգեր, որոնք Ալի-Ակունների, Օրթանների ժամանակից անփոփոխ մնում են:

Ինչպէս կոչվում, ժողովներ են կազմում, խելք խելք են տալիս եւ ընտրում են ուսումնարանական յանձնաժողովի համար իբր անգամ այնպիսի ձայնաւորներ, որոնք իրանց միջից ամենահմուտը եւ ամենաձեռնհասն են համարվում ուսումնարանական հարցերի մէջ: Եւ անա ընտրեալների միջից ընտրված այդ հասակաւոր, լուրջ մարդիկ նիստեր են գումարելու, եթէ դեռ չեն գումարել, արձանագրութիւններ են կազմելու, եթէ դեռ չեն կազմել, իբր թէ դպրոցական բժիշկների ընտրութիւն կատարելու համար, երբ, հէնց իրանց ասելով, արդէն առաջուց վճռված է, որ այդ տեղերը տրվելու են պ. քաղաքապետի թեկնածուներին:

Ինչպէս եւ ոչ-յիմար մարդիկ յանձն առնում գերակատար հանդիսանալ այդպիսի մի անհամ կատակերգութեան մէջ,—այդ հասկանալի է, ի հարկէ, քանի որ մեղանում հասարակական հարցերը վճռում են ոչ սկզբունքների, այլ զանազան նկատումների հիման վրա, բայց անհասկանալի է, թէ ինչու ուսումնարանական յանձնաժողովի անդամները նիստ են անուանում իրանց ժողովները եւ ոչ ներկայացուցիչ: Յ.

«ԶԱՆԱՎՇԶԻԿՈՒՀԻՆԵՐ»
(Նամակ Գանձակից)

Էգոիզմն ու ընկալիմը, այսինքն կոպիտ եսասիրութիւնը ու եւս առաւել կոպիտ իրասիրութիւնը մեր կեանքը լափող հին, շատ հին արտեր են. ամեն տեղ եւ ամեն ազգի մէջ նրանք որոշ չափով գոյութիւն ունեն, բայց կարծեմ միմիայն մեր մէջն են տալիս նրանք առանձին տեսակի չէզոքութիւն: Ոչ մի բանում մենք ամենապիսի նշանաւոր քաղաքով չենք առաջադիմում, ինչքան եսասիրութեան ու իրասիրութեան մէջ: Ամեն բանից մեզ նախ տուէք նիւթ, որոյց տուէք, թէ ինչքան է այդ բանը օգտաւէտ մեզ մեր անձնական շահերի տեսակէտից ու յետոյ միայն մեր հայրենայինները ուղղեցէք դէպի Օլիմպոս ու Պարնասի գագաթները.—անա հայի ու հայունու, ցաւելով պէտք է ասել, այն էլ ընկալիմներն, սովորական պահանջը:

Իրապաշտութեան չէզոքութիւնը պէտք է համարել այն վատեցողիչ երեւոյթը, որ հայ կնիւր, դպրոցի նստաբարձը հազիւ թողած հայ օրիորդը, իր «սիրած» տղամարդի սիրտը վնասում է նրա... դրպանում... Նա ծիծաղում է բանաստեղծների միմեկին վրա ու ոգեւորվում է ուգեքն... «վան չափութեան» անուն կրող նախարարներին ընկերութեան ընտրա-

եւ ճնշում ամեն ինչ: Անդրկովկասեան սահմաններից դուրս դարձող այսօր էլ դեռ անչարժ են մնում, ժամանակը կանգնած է: Իսկ մեզ մօտ: Մենք մեր ետեւում մի դար ունենք, որ բաւական առաջ է տարել մեզ ոչ միայն տնտեսական, այլ եւ մտաւոր գործերի մէջ:

Մենք, հայերս, մեզ վրա էլ կարող ենք տեսնել այդ հարիւր տարիների թողած հետքերը:

II
Ի՞նչ էինք մենք հարիւր տարի առաջ: Մենք կազմում էինք հայութեան արեւելեան մասը, բայց յետամնաց ու խաւար մասը: Մեր գրականութիւնը ամբողջապէս կենտրոնացած էր վենետիկում եւ Կ. Պօլսում: Ինքնաստեղծութիւն մէջ նոր էր սկսել մի գրական կենդանութիւն, որի ոգին Յովսէփ Կալիստոպոս Արղիթեանն էր, բայց դա այնքան մեծ հեղինակութիւն չէր ստացել, եւ մեր ողորմելի մտաւոր պահանջներին բաւարարութիւն տալու համար մենք աչք էինք տնկել արեւմտեան հայութեան վրա: Ի՞նչու մեր երկրում, Անդրկովկասում, չը կար ոչինչ կուտորական եւ գրական կենտրոն, ոչինչ ուսում, ոչինչ կրթութիւն:

Բայց ուսաց տիրապետութիւնը հաստատվելուց յետոյ մենք առաջադիմելու մեծ զարկ ենք ստանում: Վրաստանի մայրաքաղաքը դառնում է կարեւոր կենտրոն. այդտեղ բացվում է առաջին հայ կանոնաւոր դպրոցը, հաստատվում է տպարան: Պետութիւնը միջնա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ

I

Ուղիղ հարիւր տարի առաջ, 1801 թւականի փետրվարի 17-ին (այն ժամանակ օրը կիրակի էր) Թիֆլիսի հայոց վանքի եկեղեցում մեծ, չը տեսնված հանգէտով կարգապէս Պաւել կայսրի այն հրովարտակը, որով ուսաց տիրապետութեան առաջին հիմնադրարն էր դրվում Անդրկովկասում—Վրաստանը դառնում էր Ռուսաստանի սեփականութիւն: Յովսէփ կաթողիկոս Արղիթեանը իր քարոզի մէջ «Քրիստոնեան օր» անուանեց այդ օրը:

Անկողմնապահ պատմութիւնը պարզ կերպով վկայում է, որ հայերը ամենից անկեղծ ոգեւորութեամբ ընդունեցին ուսաց տիրապետութիւնը: Եթէ վրաց ազգի մէջ, շատ հասկանալի պատճառներով, դեռ կային տատանումներ, հակառակութիւններ, հայերը, չունենալով ուրիշ հաշիւներ, ուրախութեամբ ենթարկվեցին նոր կարգերին: Նրանք իրանց ոչ միայն ներածին չափ աշխատեցին, որ ուսաց տիրապետութիւնը հաստատվի Վրաստանում, յայտնի են Յովսէփ կաթողիկոսի, Թիֆլիսի մէլքէ Իլյան Դար-

չօ Բէհրուզովի, իլյան Սոլոմօն Արղիթեանի ջանքերը եւ մատուցած ծառայութիւնները այնպիսի պատմական րօպէներում, երբ անհամաձայնութիւնները, խռովութիւնները պատրաստ էին մեծամեծ բարդութիւններ եւ դժուարութիւններ առաջացնել:

Հայերի այդ տեսակ վարմունքը շատ հասկանալի կը լինի, եթէ նկատի առնենք թէ նրանք վրաստանում ինչ գործ էին գործում: Հայերը մեծ մասամբ առեւտրական, առհաստաւոր եւ երկրագործ դասակարգն էին կազմում, տարբեր, որոնք իրանց զարգացման եւ բարօրութեան համար կարօտ են խաղաղութեան, հաստատուն վարչական եւ օրէնսդրական կարգերի: Այդպիսի գրութիւն միայն ուսաց տիրապետութիւնն էր խոստանում: Եւ հասկանալի է, որ հայերը, իբրեւ աշխատաւոր տարր, աւելի ուրախութեամբ պիտի վերաբերվէին պատմական այն խոշոր դէպքին, որ գալիս էր կերպարանափոխելու ամբողջ Անդրկովկասի ճակատագիրը:

Հարիւր տարի է այսօր անցնում այն օրից... Ուրպիսի տարբերութիւն է ներկայացնում այդ մի հատիկ դարը այն բազմաթիւ միամտան տխուր, ողբալի դարերի համեմատութեամբ, որոնք անցել էին մեր երկրի վրա մինչեւ նրա դարը:

Ասիական մի բազմաշարժար երկիր, անապին բազմութիւն կազմող քրիստոնեայ ժողովուրդ-

կան» ակցիաների վերջին գնորդ ու ոսկու աղբյուրներ, անսպառ ու անհուն հարստութեան երանաւէտ վայրեր խոստացող բազմաճաշակ «գաւազաններով»...

Ինչ եւմ ասում. այդ ողբերգութիւնը հասնում է մի այնպիսի բուռն ու անզուսպ էնտուզիզմով, որ նոյն իսկ նազելի, հրեշտակապատկեր, անարատ ու անբծ օրորողը, իր անուշիկ «գաւազան» է տալիս ուր հարկն է ինչ որ հանքեր չհանգործելու համար ու այդպիսով փառաբանական զանգուշ է իրան ժամանակակից Մոզոքին, ուղիղ լուրջին, որը, խելով նրանից այն բոլոր բաները, որոնցով մարդ քիչ-չատ նմանվում է իրան ստեղծող Աստուծուն եւ այդպիսով զանազանվում ուրիշ չնչաւորներով, կը տայ նրան սեփական կառք ունեւորի անիւներով, կազմակազմող նոյններ, փառահեղ պալապցո փառահեղ կահ-կարասիքով, ուղղակի Պարիզում պատկերվող գեներներ, արեւոյն զառահարկ չրազգեստներ, երկրպագուների վոնմակ ու շատ սիրասուն ժպիտներ, իսկ զրանցից լաւ, զրանցից բարձր, վեհ ու վեհմ էլ ինչ կայ այս անցաւոր աշխարհում...

Մինչեւ այժմ մենք ունէինք «գաւազաններ» միայն, իսկ այժմ կարող ենք պարծենալ նրանով, որ ունենք նաեւ «գաւազաններ» ինքնով, որ ունենք մտայն հորիզոնն է նոր աստղերով զարդարվում եւ թէ հայկական բառարանն է նոր բառերով ճոխանում:

Դեռ շատերը մեղանքից թոյլ են տալիս իրանց գանգատվել նորամուտ դարից, թէ նա մեղ, հայերին համար ոչ մի սիրարկող չէ բերել, հէր օրնվածներ, միթէ անարարիղծութիւն չէ մեր կողմից զրանից լաւ սիրարկող պահանջը նրանից...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻԹ

Փետրվարի 10-ին

Ներկայացումների սեզոնը վերջացաւ Վարդանանց տոնի տոնիքով, փետրվարի 8-ին, դերասանական խումբը ներկայացրեց երկու անգամ՝ ցերեկը եւ երեկոյան՝ Յերեմի ներկայացում էին «Արշակ II», իսկ երեկոյան «Պէպո»—մասնակցութեամբ Չմկեան ամուսինների:

Մի քանի խօսք ցերեկվայ ներկայացման մասին: «Արշակ II-ի» մուտքը յայտնարած էր կրտսեր դերասանների օգտին: Պատասխանատու դերը, Արշակ II, վերցրել էր պ. Աղա-յան, որ ոչ մի ազդեցութիւն չէր անում իր խաղով հանդիսատեսների վրա: Աչքի ընկնող դերասաններից ոչ մէկն էլ չէր մասնակցում, որպէս զի գոնէ մի քիչ հետաքրքրութիւն զարթեցնէին: Մեր կարծիքով աւելի լաւ է այսպիսի դէպքերում առաջնակարգ դերասաններն էլ մասնակցին, քան թէ թողնեն պատասխանատու դերերը այնպիսիներին, որոնք միայն դերերը փչացնում են:

Թատրոնը համարեա դատարկ էր: Մի բան, որ աններելի է թատրոնական վարչութեան, այն է, որ նա զրացել էր ամբողջ սեզոնին մի երեկոյ էլ նուիրել կրտսեր դերասանների օգտին: Չէ որ նրանք աւելի չեն զրոյթեան մէջ են գտնվում ու աւելի քիչ ուժիկ են ստանում,

կարգ կրթութեան գործը հնչաւորում է, բայց անելով Թիֆլիսում գիմնազիա Լազարեան ձեւաբանը մեծապէս նպաստում է մեղ, համալսարանների դռները բաց են հայ երիտասարդութեան առաջ: Ստեղծվում է մեղանում ինտելիգենցիա, օտեղծվում է գրականութիւն, մասնաւոր. հետզհետեւ առաջ են գալիս նոր, գեղեցիկ տեսնված ձեւերը մտաւոր գործունէութեան մէջ, ամսագիրներ, լրագիրներ, վէպ, բանաստեղծութիւն, մանկավարժութիւն: Մտքում են հասարակական խնդիրներ, մի կենսատու պայքար է սկսվում, սերունդների մի յաջորդակա-նութիւն զաղափարներն եւ հայեացքներն շուրջը:

Անդրկովկասեան հայութիւնը, շնորհիւ այն հանգամանքի, որ անցնալ դարի սկզբից մտաւ ուսուցիչ տիրապետութեան տակ, աւազին պատ-մական եւ կուլտուրական դեր է կատարում ամբողջ հայութեան մէջ: Մենք ուսուցիչ մտքի, ուսուցիչ գրականութեան ազդեցութեան տակ ենք կանգնում ապրել եւ զարգանալ, հետեւաբար գերմանական ոգին ենք մոցնում դաստիարակութեան, գրականութեան մէջ, մինչդեռ ա-րեւմտեան հայութիւնը չարժանակում է մնալ բոսանական ազգերի ազդեցութեան տակ: Այս երկու ուղղութիւնները միանում են, առաջնորդում գրական եւ կրթական շարժումներ, որոնք ունեն իրանց փայլուն պատմութիւնը:

Միաժամանակ զարգանում է կովկասեան երկրի անտեսական կենսաբ: Պետութիւնը ան-

քան առաջնակարգերը, էժանացում գնորդութեամբ անաւան վարչութիւնը կամեցել էր վարձատրել դերասաններին. բայց աչքի առաջ չէր ունեցել, որ բայց սովորողներից եւ հասարակ գաւազաններից, ոչ ոք չէր լինի, հետեւապէս եւ ոչ մի օգուտ: Եթէ ներկայացումը լինէր կի-րակի օր, գուցէ այն ժամանակ ժողովուրդը շատ լինէր, որովհետեւ ծառայողներն մեծ մասը ա-զատ կարող էր լինել: Մի քանիսը, թէեւ ուշ, ուղեցին սխալ ուղղել ու պակասը լրացնել փող ժողովուրդով, բայց ունեցի պիտի ժողովէին. դատարկ գրպանով սովորողներից, որոնք յա-մար միջոց էին գտել օգտվելու դէպքից եւ գոնէ մի անգամ (բացառութիւնների մասին չէ խօսք) ներկայ գտնվելու հայկական ներկայաց-ման: Ասում ենք մի անգամ, որովհետեւ նը-րանք, միջոցների սղութեան պատճառով, չեն կարող ամեն անգամ վճարել 1 րոպէի եւ 1 ր. 60 կ. (քենեֆիսի ժամանակ): Ամեն տեղ, ա-մեն ազգութեան մէջ ուսանողների եւ սովո-րողների համար ամսականների գները միշտ պակսեցնում են, իսկ մեղ մօտ այդպիսի բա-նեւ անհասկանալի են:

Ս. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻ

Հինգշաբթի, փետրվարի 15-ին, ինչպէս յայտ-նել էինք, պէտք է կայանար Ախալքալաքի դաւառում երկրաշարժից վնասվածներին օգ-նող զինուոր կօմիտէի նիստը, սակայն այդ նիստը չը կայացաւ, որովհետեւ կօմիտէի ան-դամներից ներկայ էին միայն երկու հոգի, չը նայելով որ նիստում պէտք է ընդունեան են-թարկվէին խոշոր եւ կարեւոր հարցեր: Թիֆ-լիսի պ. նահանգապետի կարգադրութեամբ կօմիտէի առաջիկայ նիստը նշանակված է երկուշաբթի, փետրվարի 19-ին, երեկոյան ժամի 8-ին, նահանգապետի դիւանատան մէջ:

«Финляндская Газета» լրագրում տպագր-ված է. «Փետրվարի 5-ին Հէլսինգֆորսում, ֆինլանդական կայսերական սենատի կողմից 1899 թ-ի փետրվարի 3-ի Բարձրագոյն հրո-վարտակի հրատարակման տարեգրածի օրը, տեղի ունեցան մի շարք ցոյցեր: Երեկոյան մօտ ժամի 5-ին էլեկտրական հաղորդիչ լարի վրա խալանադէ փողոցում քաշ էր արած սեւ պատառ մի անտարբեր անուններով, որոնք ձայն էին տուել յօգուտ հրովարտակի հրատա-րակութեան: Նոյն անունները գրված էին նաեւ «Crescent» խալանի վրա: Կրտսերներից զբաղ-ված տարնապարտման վրա, ուր, բայց զբաղից կարգադրվում էին հետեւեալ մակագրութիւն-ները. «Օրէնքը բարձր է ամեն բանից», «Եր-կիր պէտք է կառավարվի օրէնքով» եւ այլն: Երեկոյան ութնորդ ժամի սկզբին տները այն պատուհանները, որոնք փողոցներին են նա-յում, ծածկվեցին վարագոյրներով, խանութնե-րը փակվեցին եւ ճրագները հանգրվե-ցին: Մնացին լուսաւորված միայն ուսու-նելի մի քանի խանութներ, Հէլսինգֆորսի ուսուցչական մեծամասնութեան բնակա-րանները եւ միայն շատ քիչերը տեղական բնա-կիչներին խանութներից եւ ընտարաններից: Ծրագրերի այսպէս անժամանակ եւ միասին ընդհատ միջոցներ է ձեռք առնում երկրում կուլտուրան, գիւղատնտեսութիւնը, գործարա-նական արդիւնաբերութիւնը բարձրացնելու համար: Բարձրագոյն մասնաւորական դպրոց-ները տալիս են մեղ մասնագէտներ, երկաթու-ղիներ են կառուցվում, չոգեմասային կանոնա-դր եւ հաղորդակցութիւն է հաստատվում կա-պից եւ Սեւ ծովերի վրա: Մշակվում են լեռ-նային հարստութիւնները, հոսմ նիւթերի ար-տահանութիւնը աւելի կանոնաւոր, աւելի հնչու-ու է ժամ ձանապարհներ է գտնում: Հայերը, իբրեւ մի ժողովուրդ, որ վաղուց առեւտրական եւ անտեսական գործերի են նուիրված, նա-նաւոր առաջադիւսութիւն են ցոյց տալիս, եւ այնտեղ, ուր դարի սկզբին պէտք էր շատ մեծ ճարտարութիւն՝ ձեռք ընկած հարստութիւնը անվտանգ պահպանելու համար, այժմ արագ զարգանում են խոշոր կապիտալիստներ, որոնք բոլորովին նոր կարգեր են մտցնում անտեսա-կան եւ արդիւնաբերական գործերի մէջ, ստեղ-ծում են բոլորովին նոր աշխարհ: Մեր առջեւ էլ այժմ դրված են այնպիսի սոցիալական եւ տնտեսական հարցեր, որոնք զոյութիւն ունեն եւրօպական ազգերի մէջ:

Մենք սովորեցինք օրինականութեան: Մեր հասկացողութիւնները արդարադատութեան, յանձնաճակնի, պատասխանատուութեան մասին բարեխղճութեան ենթարկվեցին: Մարդասէր դատաստանական օրէնքները, որոնք Ռուսա-

հանգցնելը ամբողջ քաղաքում յայտնապէս բա-ցատրվում էր մի քանի օր առաջ տարածված յայտարարութիւններով, որոնցով Հէլսինգֆոր-սի բնակիչները հրաւիրվում էին փետրվարի 5-ին, երեկոյան ժամի 7-ին հանգցնել ճրագ-ները: Ժամի 7-ին մի մեծ խումբ, բաղկա-ցած զինուորական երիտասարդներից եւ ին-տելիգենտներից, հաւաքվեց Ալէքսանդր II կայսրի արձանի մօտ, որի պատուհանների վրա մի խումբ կանայք գրին սուգի ժապաւէն մա-կագրութեամբ, ժապաւէն շուտով վերցնվեց: Մի եւ նոյն ժամանակ ժողովրդի մի բաւական մեծ բազմութիւն, որի մէջ քիչ չէին եւ երի-տասարդներ, չըլում էր քաղաքի փողոցներում, եւ ստիպում խանութպաններին հանգցնել դեռ-եւս չը հանգցրած ճրագները: Մի քանի հոգի մինչեւ անգամ թոյլ էին տալիս իրանց ընտի-ներս մտնել խանութները եւ անձամբ հանգցնել ճրագները: Այսպէս առիպված էին հանգցնել ճրագները Պերլովի, Վորոբեովի եւ Ալազինի խանութներում: Դրա հետ միասին ամբողջ հաւաքվում էր ուսանելի լուսաւորված բնա-կարանների հանգէպ, իսկ ցոյց անողներից մի քանիսը, չը բաւականանալով դրանով, թոյլ էին տալիս իրանց զանգահարել քաղաքի կենտրո-նում ապրող մի քանի շտաբ-օֆիցերների բնա-կարանների զանգերը, աղաղակել սանտուղ-ների վրա, սպառնալ եւ միայն հրաւիրված ոստիկանները կարողացան հետցնել ցոյց ա-նողներին եւ թոյլ չը տալ նրանց խուժուել բնակարանները: Նոյն ժամանակ եւ նոյն նպա-տակով ամբողջ հաւաքվեց Ռիվլի գրավաճա-ռանոցի հանգէպ: Վերջապէս ամբողջ «կա-տուի համերգ» կազմեց սենատորներից մի քա-նիսի բնակարանների առաջ: Սենատորները ստացան սպառնական նամակներ «Փաղանի հայ-րենաւիրական միութիւն» ստորագրութեամբ:

«Новости» լրագիրը հաղորդում է, որ կազ-մակերպվում է անգլո-ուսական սինդիկատ Այս սինդիկատը, որ դրամական աւազին մի-ջոցներ ունի, մտադրել է սկսել Ռուսաստա-նում ընդարձակ առեւտրա-արդիւնաբերական ձեւարկութիւններ—չինի երկաթուղիներ, մը-չակել հանքեր, բանալ զանազան գործարաններ եւ այլն: Մինդիկատին մասնակցում է նաեւ յայտնի ամերիկական միլիոնատէր Վանդը-րիլտ:

ՇՈՒՇՈՒԹ մեղ գրում են. «Գանձակից ստա-ցած մասնաւոր հետաքրքիր հաղորդում է, որ նա-հանգապետ Լուսաւոր հաստատել է մեր քաղա-քի իրաւաստներին ընտրութիւնները, համա-ձայն ընդհանուր օրէնքի, այն է՝ ջուէների ա-ռուելութիւն ստացողներին, եւ քաղաքապետի որոշումը թողել է անհետեւեալ: Ուրեմն ար-դարութիւնը երեւան գալով, մենք նոր կազմի մէջ կը տեսնենք 26 հայ եւ 14 թուրք ձայնա-ւորներին»:

ՂԱՐԱՍՈՒԲԱԶՍԻԹ մեղ գրում են. «Փե-տրվարի 8-ին, Վարդանանց տոնի օրը, տեղիս հայոց ուսումնականի դահլիճում տեղի ունե-ցաւ աշակերտական պար—երեկոյթ եւ ներկա-յացում: Երեկոյթի ծրագրերը կազմված էր բազ-մակողմանի: Աշակերտները ներկայացրին «Հնա-տանի լաւագոյն գործն են համարվում, կըր-թում էին տանեակ տարիների ընթացքում կովկասեան բոլոր ազգերին, տարածելով ամեն տեղ քաղաքացիական եւ քրէական արդար, արագ, հրապարակական դատավարութեան սկզբունքները: Ինքնավարութեան, հասարա-կական ինքնօրգութիւն, ձեւներէցութեան սկզբունքները լայն հիմքեր բռնեցին մեր մէջ: Մենք մինչեւ անգամ սովորեցինք պաշտօնեա-ների ընտրութեան մէջ մտցնել զաղափարա-կան դաւանանք, ուղղութիւնների եւ պա-հանջների հարցեր:

III

Անհնարին կը լինէր մի յօդուածի մէջ պատ-կերացնել այն բոլորը, ինչ տուեց Կովկասի ուսուցիչ տիրապետութեան առաջին հարիւրա-մեակը: Կարելի է ասել, որ մեր երկրում շատ չէ այնպիսի ազգերի թիւը, որոնք բոլորովին անմասն մնացած լինեն ընդհանուր առաջադիւսութեան, կերպարանափոխման մէջ: Կան Կովկասում, ի հարկէ, եւ կուսական անկիւններ, բայց այժմ անօրինակ բան չէ, որ քիւրդի կամ ինգուշի որդին բարձրագոյն ուսում ստանայ եւ դըր-կատարէ իբրեւ զարգացած եւ կարող մարդ: Հետցնելով խուլ անկիւններն էլ եւ ամենում քաղաքակրթական պահանջները: Մեր գիւղերը կերպարանափոխվում են. գետնափոք խրճիթ-ները տեղ երեւան են գալիս նոր ձեւի տներ, գրագիտութիւնը տարածվում է, թէեւ դան-

գանդութեան փորձ լօղբով, կարգացին ուսա-նաւորներ հայերէն եւ ուսուցին լեզուներով, ապա տեղի ունեցան երգեր եւ հայկական ժողովրդական ու եւրօպական պարեր: Ապա աշակերտներին տրվեցին թէյ եւ քաղցրեղէններ: Յանկալի էր, որ այսպիսի կրթիչ բնաւորու-թիւն ունեցող երեկոյթներ աւելի յաճախ լի-նէին»:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՒԹ մեղ գրում են. «Վեր-ջերս Ալէքսանդրօպօլի երկրորդ քաղաքապետի ընտիւ պ. Լէչեկովսկու մօտ քննվում է մեր հա-րուստ քաղաքացի Յ. Դրամբեանի գործը՝ վաչ-խառութեան մասին: Գործը վերաբերում է մասնաւոր փաստաբան (գրկված այժմ այդ ի-րաւունքից) Ա. Յարութիւնեանից, որը Դրամ-բեանին տուած է եղել 900 ր. նօտարիական մուրհակ եւ ստացել է նրանից միայն 600 ր. եւ այդ գումարը նա անմիջապէս յանձնել է իր պարտատէր Մկրտումեանից, իսկ 300 ր. հաչ-ւում է ստիպու: Բացի այս հրէշաւոր ստիպոյի, Դրամբեանը, օգտվելով Յարութիւնեանի նը-թապէս ընկած դրութիւնից, 600 րուբլու փո-խարէն վերցրել է եւ Յարութիւնեանի սեփա-կան ջրաղացը գրաւ: Ալէքսանդրօպօլիները շատ լաւ են ճանաչում իրաւունքից գրկված մաս-նաւոր փաստաբան Յարութիւնեանից... Եթէ նրա պէս օրէնսգէտ մարդը վախառու աղալի ճանկերից չէ կարող աղատվել, ապա օրէնք չը գիտցող, խեղճ արհեստաւորների եւ մանրա-վաճառների հետ ինչպիսի անաստուած խաղեր են խաղում վախառու աղաները»:

ՂՈՒԲԱՅԻԹ մեղ գրում են. «Բաղուրի նա-հանգապետ դատարանի քրէական բաժինը ե-կաւ Դուրա 80 գործերի քննութիւնը կատա-րելու: Այսօր, փետրվարի 14-ին, նա սկսեց առաջին նիստը. կը մնայ մինչեւ մարտի 12-ը»:

ՄՂՆԱԽԻԹ մեղ գրում են. «Նոր ընտրված քաղաքային լիազօրները, բայց մէկից, արդէն հաստատված են նահանգական իշխանութեան կողմից իրանց պաշտօններում եւ անհետեւանք է թողնված մի քանի ընտրողների բողոքը: Լուր է պտտում, որ նահանգական քաղաքային մասի վարչութեան վճռի դէմ բողոք են ներ-կայացնում կառավարչական Սենատին մի քանի ընտրողներ: Նոր լիազօրները համարեա ամեն օր հաւաքվում, խօսում են եւ մինչեւ օրս չեն ընտրել քաղաքապետի պաշտօն: համար իսկա-կան թեկնածու: Թէ ո՞վ կը լինի, այդ միւղ մօ-տիկ ապագան ցոյց կը տայ»:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻԹ մեղ գրում են. «Բարե-կենդանի տօներին տեղական թատերասէրները Վաղարշապատ գիւղի չքաւորների օգտին խա-ղացին «Ռուզան» դրաման, «Գըռթ-կըրթ» եւ «Միկիկ» լօղբովները: Մի միւթարական ե-րեկոյթ, որ աչքի էր ընկնում, այդ ուսւ եւ հայ սիրողների միմեանց մօտենալը եւ ընդհա-նուր ոյժերով ներկայացումը աջողեցնելն էր: Խաղը անցաւ բաւական աշուղ: Ինչպէս իմա-ցանք, նոյն թատերասէրները մտածում են կրկին միացած ոյժով մի քանի ներկայացում տալու: Զատկից յետոյ: Մի պակասութիւն, որ աչքի էր ընկնում, դա շինութեան անշարմա-

դաղ քայլերով: Իւրաքանչիւր պատմական շրջան ունենում է իր լոյսերն ու ստուերները, իր պակասու-թիւններն ու աւելորդութիւնները: Բայց մենք իւրաքանչիւր շրջանին պիտի նայենք ընդհա-նուր առմամբ, մի հայեացքով, եթէ կամենում ենք կարճ կերպով բնորոշել նրան, գտնել նրա անունը: Այսպէս նայելով այն հարիւրամեակին, որ լրանում է այժմ, մենք կը տեսնենք, որ դա աննշանաւ զարգացման մի շրջան էր: Որոշակի երկրի ճակատագիրը, առաջադիւսութիւն խա-ղաղ, կուլտուրական ճանապարհի վրա—ան-հնչ է դրել մեր առջեւ անցած դարը: Մի եւ նոյնը կը լինի, անկասկած, եւ նոր, երկրորդ հարիւրամեակի պահանջը:

Եւ կովկասեան իւրաքանչիւր ազգ, ունենա-լով իր ետեւում հարիւր տարվայ փորձ, պի-տի աշխատել առաջ գնալ, առնել, քըրք-տնել թափել մեր երկրի խաղաղ բարօրու-թեան համար: Համբարախութիւն, կուլտուրա-կան եռանդ, պարտաճանաչութիւն, տոկու-նութիւն ազգերի եւ ժողովուրդների մի ընդ-հանուր, եղբայրակցական կապերով հաստա-տուն խաղաղ ընտանիքում—անա ինչ ենք ցանկանում մենք հայերին այն նոր հարիւրա-մեակի սկզբում, որի մէջ մտնում ենք այսօր ուսուց տիրապետութեան տակ:

րութիւնն էր: Մուտքը եղել է մօտաւորապէս 80 ր., որի կրկնապատիկը կարող էր գոյանալ, եթէ դահլիճը մեծ լինէր եւ յարմարութիւնները լայնացնէր: Այսպէս ընկերութեան տեղական փականը ծիւղի որոշումը չուտով ի կատար ածվելու եւ չինվիւստիւ թափարկան դահլիճը, որի կարիքը պահանջարկը չուտով եւ որի մասին տեղեկացում էր չուտով եւ որի մասին տեղեկացում էր չուտով: Որքան տեղեկացանք, այդ փողը գտնուում է երէցներու պ. Աւետիս Օհան-ջանեանի մօտ: Սակայն, ասում են, թափարկան դահլիճի չինութիւնը յետ է ընկնում: Եւ որովհետեւ ինքնապատշաճութեամբ զարգացել է ժողովրդական այդ մեծ կրթարանի համար տեղ որոշելու, այն ինչ զանազան հայկներ, մուսուլմաններ եւ այլ աղաներ այդ կարեւոր խնդրի հետ միաժամանակ կամ յետոյ են խնդրել տրուել, բայց արդէն վաղուց ստացել են իրանց համար անհրաժեշտը:

ՍԻՄՅԵՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Այսօր, փետրվարի 8-ին, վարդապետը տունը օրը պատարագից յետոյ, քահանայները մէկի հրահրով եկեղեցու մօտ գտնվողներին մեծ զանգով խնդրեց հայտնի տալ միասնաբար, որտեղ աշակերտներին համար հանդէս էր պատրաստվում: Աշակերտական խումբը, ուսուցիչ պ. Չ. Մուրադեանի ղեկավարութեամբ, երեք մի քանի երգեր, այնուհետեւ շաղարար քահանայ Թովմասիանը ծառ խօսեց: Վարդապետը տունի առիթով: Դրանից յետոյ աշակերտները երկու մասնական ներկայացուցին տուեցին, մէկը՝ հայերէն եւ միւսը՝ ռուսերէն լեզուով: Երեկոյան նոյն ուսումնարանի դահլիճում պէտք է որով «ДЕНЕЖНЫЕ ТУЗЫ» պիտանայ հայերէն թարգմանութեամբ, նոյն կրկնվելու է եւ վաղը»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 13-ին, գիշերը, անայտ չարագործների ձեռքով սպանվել են թաղական է քաղաքի յայտնի վաճառականների միջոցով մարկուսները: Մարկուսները մեծ զանգով խնդրեց հայտնի տալ միասնաբար, որտեղ աշակերտներին համար հանդէս էր պատրաստվում: Աշակերտական խումբը, ուսուցիչ պ. Չ. Մուրադեանի ղեկավարութեամբ, երեք մի քանի երգեր, այնուհետեւ շաղարար քահանայ Թովմասիանը ծառ խօսեց: Վարդապետը տունի առիթով: Դրանից յետոյ աշակերտները երկու մասնական ներկայացուցին տուեցին, մէկը՝ հայերէն եւ միւսը՝ ռուսերէն լեզուով: Երեկոյան նոյն ուսումնարանի դահլիճում պէտք է որով «ДЕНЕЖНЫЕ ТУЗЫ» պիտանայ հայերէն թարգմանութեամբ, նոյն կրկնվելու է եւ վաղը»:

ՔԻՆԳԻՅԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է, մօտ մէկ ու կէս տարի է, ինչ արգելված է պարսկական դուռնի մուտքը Ռուսաստան, սակայն երկրի մէջ եղածները գործածութիւնը արգելված չէ լինելու պատճառով, Մէլքիս եւ Ասկարաքի «սառնափ» հրէաները թուրքմանների միջոցով Մէլքաքից ծածուկ բերել տալով վաճառում են եղել Ռուսիայի այդ բանը իմանալով, կատարելութեամբ անցանք ամսի 8-ին, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ հետագործ յայտնեց, որ պատահած դուռնի անմիջապէս բռնեն: Այստեղ բռնված է մօտ 16 հազար ռուբլու դուռնի, որից 6 հազարը պատկանում է հրէաներին, իսկ մնացածը երկու հազար տեղականներին: Սակայն վերջիններս ունեն վաճառողից եւ կայարանից վկայագիր եւ կարող են յետ ստանալ: Աֆղանիստանում, որտեղից արտահանվում է մեծ քանակութեամբ ապրանք, ապրանք կարելի է առնել միայն դուռնով, որովհետեւ այդ երկրում ուրիշ փող չէ ընդունվում, ուրեմն դուռնի յանալ կարծիքի արգելվելու պատճառով վաճառականները պիտի ենթարկվեն մեծ վնասների եւ բոլորովին կը թուլանայ եղած առեւտրական յա-

րարեութիւնը Աֆղանիստանի հետ: Ահա այս քանի օրերս բոլոր վաճառականների ստորագրութեամբ տեղական իշխանութեան միջոցով խնդրելու դարձել է ֆինանսների միջոցով, ապացուցանելով ապագայ մեծ վնասը, որ պիտի կրեն մասնաւոր գործերի կապալառուները, որոնք ամեն բան՝ միս, դարձ, յորեն, խոտ Աֆղանիստանում են գնում: Այժմ սպասվում է միջոցների պատասխանը»:

ՍՂԱՆԻՑ մեզ գրում են. «Հինգշաբթի, ամսի 8-ին, պ. Յ. Գրիգորեանի նախաձեռնութեամբ տրվեց հայկական ներկայացում յօգուտ Հիւանդանոցի զարգացման շարժում: Խաղաղի Սուրբուհեանի «Էլի մէկ զոհ» կոմէդիան եւ «Օրթոմալու քէֆ» վոդևիլը: Պէտք է ասած, որ բոլոր մասնակցողները իրանց զեւրումն էին եւ խաղը ընդհանրապէս լաւ անցաւ: Մուտքը եղաւ 92 ռուբ. 60 կ., որից ծախսը 24 ռ. 80 կ. հանելով, գուտ արդիւնքը մնաց 67 ռ. 80 կ.: Նոյն սերողները մտադիր են ամսի 18-ին ձրի կրկնել ներկայացումը չքաղար դասակարգի համար: Ծառ գովելի է նրանց որոշումը եւ ցանկանում ենք կատարել աշխույթներ: Միայն խորհուրդ ենք տալիս ձեռք վերցնել «Օրթոմալու քէֆ»-ի պէս վոդևիլներին եւ նրա տեղը դնել երգեր, կամ կենդանի պատկերներ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՈՊԵՆԱԻ ՎԱՆԻ ԾՈՎԻ ՎՐԱ
Տեղական բոլոր թերթերը գրեցին արդէն թէ առաջիկայ զարնան շոքեաւ պիտի սկսի բանի վաճառ ծովուն վրա: Կայսերական կառավարութեան այս բարի մտադրութեան կիրառութիւնը վերին աստիճանի բարձր մը պիտի ըլլայ նոյն ծովուն չրջակայ ժողովրդից տնտեսական եւ նիւթական զարգացման տեսլանով: Ուստի ամենուրեք բաղձանքն ու մարթնքը օր առօր անոր գործադրութիւնը տեսնելու վրա կը կայանայ այժմէս:

Իսկ թէ ինչ կարեւորութիւն ունի շոքեաւին գործածումը այդ ծովուն վրա, պարզեմք համառօտիւ:
Վանայ ծովը, որ կիլիսի վանայ, Բաղէշի եւ Սոյ զաւառներուն մէջ՝ հիւանդի միջոց մը պիտի ըլլայ անոնց իրարու հետ յարաբերութեանը, մինչ ընդհակառակը այժմ արգելք է, քանի որ գործածութեան մէջ եղող առաջատարները ապահովութեան եւ արագութեան կողմէ այնքան պակասութիւն ունին, որ գոյութիւն չունեցածէն մեծ տարբերութիւն չունին գրեթէ: Շոքեաւում մը առ առաւել 2 ժամէն կարողեկէք անոր լայնութիւնը հիւանդութեան առաջատարները երբեմն հազու 15 օրէն կը չափեն կալիսի, զի ստիպուած են նպաստաւոր օդի սպասել, որ աշուն, ձմեռ ու գարուն շատ քիչ կը պատահի սովորապէս, եւ զիստարաբար ամառուան մէջ է, որ ծովագնացութիւնը քիչ մը յաճախական է այդ ներքին լճին վրա: Բայց աւելորդ է ըսել թէ մարդկային պէտքերը միայն ամառը չէ որ փոխադրելու են այնտեղ պէտքը զգալի կընեն: Իսկ օդի պարագային՝ շատ անգամ չարաքներով կը պարտաւորուին խաբիսն նետած սպանելու Բոլոր այս անպատեհութեանց համար առաջատարները ամեն բանի օգուտը կրնան ըլլալ բացի ծովագնացութենէ: Գոնէ Կ. Պօլսոյ մէջ ծանօթ առաջատարներուն նման գեղեցիկ, սովոր են մեծ ըլլային, կամ կազմածները եւ զեկավարութիւնը ամեն հովի առիւնէն քայլելու ընդունակութիւն ունենային, գործադրաբար այդպէս աշին, այլ բոլորովին նախնական չինուածով ամեն կատարելութիւնէն զուրկ պարզ ամփոփումներ են, որոնք ամենաթիւթի են հովի կը վախանան, իսկ աշխույթութեան բնաւ չեն գիտնար, թէ չընելու դիւրամէտ եւ թէ խաբիսը եւ դիւրաբեկ ըլլալուն համար:

Իսկ եթէ շոքեաւը յաջորդէ նահապետական դարերէ մնացորդ այդ նաւերուն, այն աստեղ կարելի ըլլայ, օրինակի համար, առաւօտուն վանէն մեկնել, ցերեկը ձալը Պիթիլը ընել եւ իրիկուան նորէն վան դառնալ, մինչդեռ հիմա այդ ուղեւորութիւնը կատարելու համար առ նաւագն 6 օր պէտք է ցամաքի ճամբով, իսկ երբեք կարելի չէ ժամանակ մը որոշել ծովուն միջոցաւ, զի կրնայ ըլլալ որ հակառակ քամի մը օրերով կամ շաբաթներով տեղ մը կապել սպասենք տայ նաւագնացները: Եւ եթէ ծովագնացները մինչեւ Սուշ կանոնաւոր կառուցի մըն ալ չինուի օր մը, կարելի ըլլայ վանէն Սուշ երթալ մէկ օրէն:

Շոքեաւը կը կարճենք նաեւ վանայ եւ

Կարնոյ հետաւորութիւնը, որովհետեւ Ախլաթէն Կարնի դիւրաւ կրնայ երթուի 6 օրէն (Ջորպանի միջոցաւ), իսկ Ախլաթ վանայ քաղաքի ճիշդ հանդիպակալ կողմէն է ծովուն արեւմտեան եզերքին վրա, ուր շոքեաւում կարելի է երթալ ոչ աւելի քան երկու ժամէն: Այժմ Ախլաթ հետեւ կը մնայ վան-Կարնի գծէն որ կանցնի Արճէշի քովէն: զի այդ վերջինը կիլիսայ ծովուն հիւսիսային ծայրին վրա, եւ ասով վերջապէս ամեն լաւագոյն շրջանը 9 օրէն աւելի առաջ չի կրնար կտրել վանէն Կարնի եղած ճամբան, իսկ սովորականն է ձմեռը 10—11 օր, ամառը 12—14 օր: Օրերու երկարութիւնը խոտոր կը համեմատուի այդ կողմերը ճիւղաններու եւ շրջաններու ճամբորդութեանց հետ, զի խնդիրը գրաստներուն ուսեստին վրան է՝ որմէ միայն կախում ունի անոնց քալելու կարողութիւնը: Եթէ չոր դարի ուսեն, շատ կը քալեն, իսկ թէ կանանց խոտ՝ քիչ: Աւելորդ է ըսել թէ ձմեռը չէ որ գետնէն պիտի արածեն կանանց խոտ:

Դարձեալ շոքեաւը պիտի կարճենք նաեւ Կարնի-Դարձեալ ճամբուն երկայնութիւնը որ կը տարածուի հիմակ Պայագիտի վրայէն եւ կը տեւէ 20 օր: Կը թողուն ըսել անասական եւ անտարական այն առաւելութիւնը զորս պիտի ունենայ վան երբ Դարձեալ պէս մեծ շահատանի մը ճամբուն վրա ինչայ, ինչ որ կրնայ ըլլալ միայն շոքեաւի միջոցաւ:

Հապա այն բոլոր դիւրութիւնները որոնցմէ պիտի օգտուին ծովուն շրոս կողմի ժողովուրդները արագ հաղորդակցութիւն ունենալով իրարու հետ, ինչպէս եւ վաճառքներու գիրքին փոխադրութեան առաջ եկած օգուտները եւ շահալուծաւորութեան զարգացումը, աւելորդ իսկ կը համարենք անոնց վրա խօսել, քանի որ ինքնին հասկնալի են արդէն:

Եւ միայն հարկ կը դառնայ ըսել թէ բարեբաղդաբար հաւքածուին ալ պատրաստ է նոյն իսկ ծովուն մօտակայ լեռներուն վրա, մինչեւ անգամ կարելի է Գործաթի հանքէն կաշմ նաւթի իւղը վառել շոքեաւին մէջ առանց գտելու: Ինչպէս կընեն ընդհանրապէս Կասպից ծովուն վրա բանող շոքեաւները:

Այս ամեն գիւրութիւններն ու առաւելութիւնները կեցած տեղը շոքեաւին հաստատման կարեւորութիւնը ինքնին կը շեշտեն, հետեւաբար յոյս կայ թէ ուրախութեամբ պիտի ողջունուի իրօք առաջիկայ զարուն շոքեաւին առաջին սուրումը վանայ ծովուն վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Königs. Hartung. Zeitung» հաղորդում է, թէ սերբիական Ալեքսանդր թագաւորը երբեք է խիստ վրէժխնդիր լինել Աւստրո-Ունգարիայի նրա համար, որ աւստրիական կառավարութիւնը չէ կատարել նրա ցանկութիւնը եւ թոյլ չը տուց Միլանի մարմինը տեղափոխել Սերբիա: Ալեքսանդր թագաւորը, սերբիական պատգամաւորների ներկայութեամբ, զրաւապաշտ յայտնեց, որ նա ոչ մի ժամանակ եւ ոչ մի բան չը պէտք է գնէ այն իրեղծներին, որոնք պատրաստվում են Աւստրիայում եւ յոյս ունի, որ նրա ժողովուրդը կը հետեւի իր թագաւորի օրինակին: Թագաւորի այս ցանկութեան դէմ պատգամաւորների ժողովի նախագահն առաջիկայ, թէ զոր անկարելի է, որովհետեւ մեր երկիրը չէ արտադրում այն ամենը, ինչ բանի որ մենք կարելի ունենք: Յամենայն դէպս պէտք է ի նկատ ունենալ ոչ այնքան այն, ինչ որ մենք գնում ենք Աւստրիայից, որքան այն, ինչ որ նա է գնում մեզ զանից եւ մեր գրութիւնը իրաւապաշտ զօրեւոր կը լինի, եթէ նա փակել իր ահմանները մեր առաջ: Այն ժամանակ մենք քաղաքի կը մեռնենք: Բայց այս խօսքերը չը համոզեցին թագաւորին եւ նա թաղութեամբ բռնեցը սերբիան խփելով աղաղակեց. «Բայց ես այդպէս եմ կամենում եւ այդպէս էլ կը լինի»:

—Բերլինից հեռագրում են «НОВОСТИ» լրագրին. «Բերլինի քաղաքային խորհուրդը դիմեց կառավարութեանը եւ բողոքեց հացի մաքսագների աւելացման նախագծի դէմ: Բողոքի պատճառաւորութեան մէջ քաղաքային խորհուրդը մատնանի չէ անում այն հանգամանքի վրա, որ Բերլինի աղքատները կարող են միայն ինչո հաց եւ եթէ հացի մաքսագները աւելացնուի, նոյն իսկ մի մարդով, այն ժամանակ քաղաքի աղքատները թեւեւ ծախք այդ ամենանհրաժեշտ կենսական պիտուքի վրա պէտք է աւելանայ 3,777,000 մարկով: Քաղաքային խորհուրդը նախագրուցւում է կառավարութեանը, որ հացի մաքսագների աւելացումը կը գրգռէ աղքատներին: Բերլինից հեռագրում են «C. П. Вѣд.» լրագրին. «Ծառ քաղաքում եւ աւստրիական քաղաքականութիւնը: Երբ Միքայէլ III Օրթոքսովի չափազանց վատագուտ դարձաւ այդ քաղաքականութեան նպատակների համար, գտնվեցին օճրագործներ, որոնք սպանեցին սերբիական

իշխանին 1868 թին: Հիմա էլ, եթէ Միլան ոչ միայն անպէտք դուրս եկաւ աւստրիական քաղաքականութեան համար, այլ նոյն իսկ սկսեց խանգարել նրան իր դոյութեամբ, պատահեց մի շատ սովորական բան—Միլան միտաւ լրագիր կարգալիս եւ իր սիրելի դարձուրը խանգարեց: Յունվարի 29-ին, 30-ին եւ 31-ին, երբ Սերբիայում տեսնում են բոլոր կարեւոր պատրաստութիւնները արքայապետը պատիւներով թաղելու Սերբիայի առաջին թագաւորին Կոստոյից յետոյ, նոյն օրերում վիճենայում անդամաւորում են Միլանի մարմինը, իսկ փետրվարի 1-ին անսպասելի լուր է ստացվում, թէ կայսերական քաղաքական կարիքներ կառավարել բարձր Շիսլ, որ մի ժամանակ զեսպան էր Բելգրադում, գտել է մի ինչ-որ միջնեւ այժմ անայտ կտակ, որով Միլան ցանկութիւն է յայտնում թաղվելու Աւստրիայում... Այդ կտակի մասին ոչ միայն ոչ ոքի մինչեւ հիմա ոչինչ յայտնի չէր, այլ նոյն իսկ նա պաշտօնապէս չէ ներկայացրած ոչ մի հաստատութեան եւ իմ հաւաքած բոլոր տեղեկութիւնների վրա հիմնված կարող եմ ասել, որ այդպիսի կտակ գոյութիւն չունի, գոնէ գրաւոր ձեւով... Վերջապէս, եթէ ընդունենք մինչեւ անգամ այդ կտակի գոյութիւնը, պէտք է ընդունենք եւ այն, որ նրա կատարումը կարող էր տեղի ունենալ միայն սերբիական պետական իշխանութեան գիտութեամբ: Այս տեսակետից Միլանի թաղումը աւստրիական իշխանութիւնների ձեռքով ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընդհանրապէս թիւն Աւստրիայի կողմից Սերբիայի եւ սերբիական արքայական տան իրաւունքների դէմ»:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

15 փետրվարի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Փետրվարի 15-ին Նորին Բարձրութիւն Թագաժառանգը այցելեց Դրամահատական տունը:

ՇԱՆԻՔԻՆ: Խաղաղական երեք զինուորական նաւեր սկսեցին չափումներ կատարել Նիւրոգ-Ջուզգում, Նիւրոգի դէպի հարաւ: Նաւաստիները բարակներ չինեցին Ջուզգի հարաւային ափի վրա:

Մասնաւոր տեղեկութիւններ համեմատ, Վէլսոի վրա ստուգեց սկսել է հաղթել Շոգեւաւերը անյապաղ դուրս կը գան այստեղից:

ՏԱԿՈՒ: Զինական աղբիւրից յայտնող ստացված տեղեկութիւնների համեմատ, Իւանչիկայի զօրքերը գնեցնալ Մենի հրամանատարութեամբ գնում են Սիւնֆու, որպէս զի առաջապահ գունդ կազմին կայսրի համար՝ նրա Պէկին վերադառնալու ժամանակ:

Կ. ՊՕԼԻՍ: Սօլունում շարունակվում են ձերբակալութիւններ: Զերբակալվածների թըւում գտնվում է բոլգարական գրավաճառ Սամարյեւի, որի ամբողջ նամակագրութիւնը բռնված է: Մակեդոնայի ուրիշ քաղաքներում եւ տեղերում նոյնպէս կապաւորված են շատ բոլգարներ եւ նրանց տներում խուզարկութիւններ են կատարված:

Անհիմն են այն լուրերը, որ իբր թէ փորձեր են եղել զինամիտով պայթեցնելու օսմանան բանկը Կ. Պօլսում:

Անգլիայի եւ Ռուսաստանի զեւսանները քայլեր արեցին Բ. Դրան մէջ՝ Յունաստանի դէմ գործադրած զիջիլեցիալ ասպիւզի վերացումը չտապեցնելու նպատակով:

ԴԵԱՍԻ: Վերջին տեղեկութիւնների համեմատ, Դէվէտ եւ Շոքեալ իրանց հիմնական ոյժերով եւ Հէրցոգի զօրաբաժնով բանակ զրեցին Օրանսեան գետի հարաւային ափի վրա եւ սպասում են հարաւորութեան գետովն անցնելու, որը այժմ անանցանելի է:

ՊԵԿԻՆ: Այսօր վերջացաւ պէկինո-շանգայ-դուանտն երկարատեւ անգլիական իշխանութիւններին յանձնումը: Արհեստանոցները Տօնո-ժանում սպասածից աւելի լաւ գրութեան մէջ գտնվեցին:

ԿՐԱՊՈԿ: Ինչպէս հաղորդում են Մէլզլըրուր-գից, բոլորները անցնալ ուրբաթ մօտեցաւ Բօսնիայից կայարանին, Բոսնի-Դրամարի-նէտ գծի վրա. սաստիկ կոիւ սկսվեց, բօլշերներ յետ մղվեցին: Այդ մի եւ նոյն գծի վրա աւելի ուշ պատերազմ տեղի ունեցաւ Անագորսի մօտ:

ՎԻԵՆՆԱ: Գրացից հաղորդում են, որ իշխան-որդի Բօրիս նորից հիւանդացաւ. որովայնային տիֆի նշաններ երեւացին:

ՄՕՍԿՎԱ: Համալսարանում մաղթանք կատարվեց ժողովրդական լուսաւորութեան միջնադարի շուտափութ առողջութեան համար:

ԼՕՆԴՈՆ: Ստանդերտները հաղորդում են, որ Ֆրէնչի ձեռքով աւար վերցված թնդանօթները բօլշերներ թաղել էին եւ գտան թնդանօթաձիգ զինուորները, երբ վերջինները անց էին կացնում անգլիական փոխադրական զօ-

